



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17025

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի օգոստոսի 22-ի թիվ 128-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/74-Ա

**ՓԱՍՏԱՔԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

06.04.2017թ.-ին դիմելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան**) դատավոր Ռ.Լ. Պապոյանը (**այսուհետ նաև՝ Առաջին դիմող**) խնդրել է քննարկել փաստաբան Երվանդ Վարոսյանի՝ դրսևորած վարքագիծը թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով դատավճռի հրապարակման ժամանակ, կցելով դատական նիստի արձանագրման ձայնային կրիչի օրինակը:

07.04.2017թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Էմիլ Ամիրխանյանի կողմից Առաջին դիմողին ուղարկվել է գրություն, որով Պալատի նախագահի առաջին տեղակալը հայտնել է, որ Պալատի կողմից ստացվել է Առաջին դիմողի 06.04.2017թ.-ի գրությունը և դրան կցված լազերային կրիչը: Պալատի նախագահի առաջին տեղակալը, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3.-րդ հոդվածի 2-րդ մասը, առաջարկել է Առաջին դիմողին ներկայացնել համապատասխան դատական նիստի համառոտագիրը, ինչպես նաև փաստաբան Երվանդ Վարոսյանին վերագրվող վարքագծի մասին պարզաբանումներ, քանի որ ձայնագրության մեջ հնչող տարբեր անձանց ձայներից հնարավոր չէր առերևույթ հետևություն կատարել, թե ինչ արտահայտություն է կատարել Երվանդ Վարոսյանը:

07.04.2017թ. Պալատի նախագահի առաջին տեղակալը գրություն է ուղարկել փաստաբան Երվանդ Վարոսյանին՝ առաջարկելով իր պարզաբանումները ներկայացնել թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով նիստի ժամանակ դրսևորված վարքագծի

վերաբերյալ:

11.04.2017թ. Պալատի կողմից ստացվել է Առաջին դիմողի գրությունը, որով վերջինս Պալատին է տրամադրել դատական նիստի արձանագրության համառոտագիրը, ինչպես նաև նշել է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանի արտահայտությունները ձայնագրաված են դատական նիստի ձայնային արձանագրման կրիչի՝ դատավճռի հրապարակման ձայնագրության 4-րդ թույն 37-րդ վայրկյանից 4-րդ թույն 50-րդ վայրկյանը:

21.04.2017թ. Պալատի կողմից ստացվել է Դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի գրությունը, որում նշվել է, որ ի լրումն Առաջին դիմողի 06.04.2017թ.-ի գրության Պալատին է ուղարկվում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստերի քարտուղար Իվետա Մուրադյանի և դատական կարգադրիչներ Կարեն Ներսիսյանի ու Ռոբերտ Հունանյանի բացատրագրերը, որոնք կցվել են նշված գրությանը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 04.05.2017թ. թիվ 125-Ա/ԿԳ-17025 որոշմամբ (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում) փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ **Կանոնագիրք**) 2.2.2. և 2.2.3. ենթակետի, ինչպես նաև 4.1. կետի խախտման հատկանիշներով:

Հարուցման որոշմամբ նշված կարգապահական վարույթով դիմող են ճանաչվել Դատարանի դատավոր Ռ.Լ. Պապոյանը և նույն դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանը (այսուհետ նաև՝ **Երկրորդ դիմող**):

Հարուցման որոշմամբ արձանագրվել է, որ թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով 17.03.2017թ. կայացված դատական նիստի ընթացքում հնչեցվել են **«Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեղը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը տականք ա, տականք»** արտահայտությունները:

Հարուցման որոշմամբ արձանագրվել է, որ նշված արտահայտությունը Երվանդ Վարոսյանի կողմից արվելու փաստի հաստատման դեպքում, վերջինիս պահելաձևը կարող է առերևույթ հակասել Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3. ենթակետերով, ինչպես նաև 4.1. կետով նախատեսված կանոններին:

Հարուցման որոշման մեջ նշվել է, որ Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Ռ.Լ. Պապոյանի և Ա.Ղուկասյանի դիմումները:

06.05.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողների համառոտ բացատրությունը.

06.04.2017թ.-ին դիմող Ռ.Լ. Պապոյանը դիմելով Պալատի նախագահին խնդրել է քննարկել փաստաբան Երվանդ Վարոսյանի թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով

դատավճռի հրապարակման ժամանակ դրսևորած վարքագիծը՝ կցելով նիստի ձայնային արձանագրությունը:

11.04.2017թ. Պալատի կողմից ստացվել է Առաջին դիմողի գրությունը, որով վերջինս Պալատին է տրամադրել դատական նիստի արձանագրության համառոտագիրը, ինչպես նաև նշել է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանի արտահայտությունները ձայնագրառված են դատական նիստի ձայնային արձանագրման կրիչի՝ դատավճռի հրապարակման ձայնագրության 4-րդ թույն 37-րդ վայրկյանից 4-րդ թույն 50-րդ վայրկյանը:

21.04.2017թ. Պալատի կողմից ստացվել է Դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի գրությունը, որում նշվել է, որ ի լրումն դատավոր Դիմողի 06.04.2017թ.-ի գրության Պալատին է ուղարկվում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստերի քարտուղար Իվետա Մուրադյանի և դատական կարգադրիչներ Կարեն Ներսիսյանի ու Ռոբերտ Հունանյանի բացատրագրերը, որոնք կցվել են նշված գրությանը:

Դատարանի դատական նիստերի քարտուղար Իվետա Մուրադյանի բացատրագրի համաձայն՝ վերջինս արձանագրել է թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով դատավճռի հրապարակումը, որի ընթացքում ամբաստանյալի մերձավորներն աղմուկ էին բարձրացնում, խոչընդոտելով դատարանին հրապարակել դատավճռի եզրափակիչ մասը: Իվետա Մուրադյանը հայտնել է, որ այդ ընթացքում դատական նիստերի դահլիճը մինչ այդ լքած պաշտպան Երվանդ Վարոսյանը մտավ դատական նիստերի դահլիճ և աղմուկ բարձրացնողների շարքերում **սկսեց բղավելով ինչ որ արտահայտություններ անել**, որոնց բովանդակությունը սակայն նա չի կարող հայտնել, քանի որ կենտրոնացած է եղել համակարգչային աշխատանքի վրա:

Դատարանի կարգադրիչներ Ռոբերտ Հունանյանը և Կարեն Ներսիսյանն իրենց բացատրագրերում հայտնել են, որ թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով 17.03.2017թ. դատավճռի եզրափակիչ մասի հրապարակման ժամանակ գտնվել են ամբաստանյալ Արմեն Միքայելյանի կողքին, երբ վերջինիս պաշտպան Երվանդ Վարոսյանը սկսեց գոռալ «**Ձենք դնողի մերը և դատողներինն էլ հետը**» և դուրս եկավ դատական նիստերի դահլիճից ձեռքով հարվածելով դռանը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Պատասխանողն իր կողմից վարույթի շրջանակներում 11.04.2017թ. և 01.06.2017թ. ներկայացված բացատրություններում նշել է, որ 17.03.2017թ. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում մասնակցել է ամբաստանյալ Արմեն Միքայելյանի գործով դատական նիստին որպես վերջինիս պաշտպան:

Պատասխանողը հայտնել է նաև, որ նշված դատական նիստի ժամանակ նախագահող դատավորի կողմից իր նկատմամբ որևէ դատական սանկցիա չի կիրառվել՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու վերաբերյալ որոշում չի կայացվել և չի հրապարակվել:

Վկայակոչվել են ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության 314¹-րդ հոդվածի 7-րդ մասերը, որոնք սահմանում են՝ «գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: **Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատը դիմելն իրականացվում է նույն**

դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար»:

Վերլուծելով վերոնշյալ իրավանորմը Պատասխանողը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 7-րդ մասը փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու համար նախատեսում է երեք պահանջ՝

1. Դատարանը սանկցիա կիրառելու մասին որոշումը պետք է կայացնի նույն դատական նիստում,

2. Դատարանը սանկցիա կիրառելու մասին պետք է կայացնի առանձին որոշում՝ կոնկրետ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին,

3. Դատարանը պետք է դիմի ՀՀ փաստաբանների պալատին՝ իր կողմից կայացրած առանձին որոշումը ՀՀ փաստաբանների պալատին հանձնելու միջոցով:

Այնուհետև Պատասխանողի կողմից վկայակոչվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածը, որի համաձայն՝

«1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է **խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով**՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մտցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են»:

Վերլուծելով վերոնշյալ իրավակարգավորումները Պատասխանողը եզրակացրել է, որ ակնհայտ է, որ գործի քննությանը մասնակցող դատախազի կամ որպես պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելն իրականացվում է օրենսդրի կողմից սահմանված հատուկ ընթացակարգով:

Այնուհետև Պատասխանողը վկայակոչել է Պալատի կանոնագրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, որի համաձայն՝ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցվածը ենթակա է կարճման, եթե հիմնավորված չէ պատասխանողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ Պատասխանողը գտել է, որ թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով նախագահող դատավոր Ռ. Պապոյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատ, նշված գործով դատավճիռ կայացնելուց 20 օր անց հասցեագրված գրության հիման վրա փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել:

Անդրադառնալով Պալատի նախագահի կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին 04.05.2017թ որոշման մեջ արտահայտած դիրքորոշմանը՝ Պատասխանողը նշել է, որ խիստ հետաքրքրական է նաև փաստաբանների պալատի նախագահի դիրքորոշումն առ այն, թե դատավորը պարտավոր չէր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով Փաստաբանների պալատ դիմելու

մասին որոշում կայացնել, և թե տվյալ դեպքում Ռ.Պապոյանի գրությունը վարույթ հարուցողը դիտարկում է իբրև «ցանկացած այլ անձի» կողմից ներկայացված դիմում:

Հարցին նման կերպ մոտենալու պարագայում, անհասկանալի է դառնում, թե նախ ինչու է օրենսդիրը դատարանի համար փաստաբանների պալատին դիմելու հատուկ ընթացակարգ սահմանել, երբ ցանկացած դատավոր որպես «ցանկացած այլ անձ, կարող է գրություն հղել պալատ, որն էլ վարույթ հարուցելու առիթ կդառնա: Մյուս կողմից էլ անհասկանալի է, թե հարցին նման կերպ մոտենալու պարագայում ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ինչու է կարճել բազմաթիվ կարգապահական վարույթներ այն պարճառաբանությամբ, թե դատավորները փաստաբանների պալատ դիմելու մասին որոշումները համապատասխան կարգի խախտմամբ են կայացրել կամ կազմել, եթե անկախ ընթացակարգի պահպանումից այդ փաստաթղթերը ևս կարող են դիտարկվել «ցանկացած այլ անձի» կողմից կազմված ու ստորագրված՝ ենթադրյալ խախտման մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթեր և «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ցանկացած առիթի, ինչպես նաև փաստաբանի դիմումում արտացոլված վարքագծում Օրենքի և/կամ կանոնագրքի առերևույթ խախտման, այսինքն կարգապահական վարույթ հարուցելու հիմքի առկայության դեպքում Պալատը պարտավոր է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ փաստաբանին վերագրվող վարքագիծը ստուգելու նպատակով:

Անդրադառնալով իրեն վերագրվող բուն արտահայտություններին՝ Պատասխանողը նշել է, որ ինչ վերաբերում է կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման մեջ շարադրված արտահայտություններին, որոնք սույն վարույթի ընթացքում հանդիսանում են քննարկման առարկա, ապա նշեմ, որ որոշման մեջ շարադրված **«էդ զենքը դնողի մերը, ապօրինի դատողի էլ հետը, եթե դա ապօրինի ա: էդ դնողը տականք ա, տականք»**, ապա հարկ է փաստել հետևյալը, որ վարույթ հարուցողի կողմից նշմարվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտում այն առումով, որ տեղի ունեցածը կարող է համարվել դատավորի նկատմամբ անարգանք, դատական նիստի կարգուկանոնի խախտում, ինչպես նաև Կանոնագրքի «Ընդհանուր սկզբունքներ» բաժնի ևս երկու դեկլարատիվ կետի խախտում, որոնք վերաբերում են փաստաբանի հեղինակությունը կասկածի տակ դնելուն, կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանը:

Պատասխանողը նշել է, որ այս առումով հարկ է համարում նախ շեշտել, որ դատավոր Ռ.Պապոյանը չի նշմարել իր անձի դեմ ուղղված վիրավորանք, հավանաբար համարելով, որ ինքը «զենքը դնողը» կամ «ապօրինի դատողը» չի հանդիսանում, ուստի դատավորին անարգելու, վիրավորելու հետ կապված մեկնաբանություններն ավելորդ են:

Բացի այդ անհասկանալի է մնում, թե դիմող դատավորը կամ վարույթը հարուցողը ինչ են ենթադրել «մերը» արտահայտության տակ: Գուցե ենթադրել են մի այնպիսի արտահայտություն, որը առաջինին ստիպել է դիմում գրել (20 օր անց), իսկ երկրորդին հարուցելու մասին որոշում կայացնել:

Պատասխանողը նշել է, որ իր համար օրինակ նման որևէ արտահայտություն չի նշմարվում, ու ենթադրվում է, որ նշված արտահայտությունը հարկ է դիտարկել իբրև «էդ զենքը դնողի մերը անպիտան զավակ է նվիրել հասարակությանը, ապօրինի դատողի էլ հետը, եթե դա ապօրինի ա»: Ի վերջո, պետք չէ մոռանալ, որ զենք դնելը կամ ապօրինի դատելը ոչ միայն անբարոյական արարքներ են, այլև քրեորեն պատժելի: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ զենքը դնողը տականք է, ապա դա մեկնաբանման կարիք չունեցող փաստ է:

Ուստի ակնհայտ է, որ հնչած արտահայտությունների պարագայում ոչ դատավորին վիրավորելու, ոչ փաստաբանի հեղինակությունը կասկածի տակ դնելու, կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանը չնպաստելու մասին խոսելն ավելորդ է:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

06.07.2017թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանն իր եզրակացությամբ նշել է, որ տվյալ դեպքում Կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը հետևյալն են՝

1. Ձայնագրառման մեջ նշված արտահայտություններն իրականում հնչեցվել են փաստաբան Երվանդ Վարոսյանի կողմից թե՛ ոչ, եթե այո, ապա ու՛մ են ուղղված եղել,

2. Նման արտահայտությունները արդյոք կարո՞ղ են Փաստաբանի վարքագծի /նշված/ կանոնների խախտում դիտվել թե ոչ,

3. Արժանահավատ են արդյոք դիմումատուի, վկաների տրված բացատրությունները, թե՛ ոչ,

4. Դիմումատուի դիմումի ընթացակարգը արդյոք համապատասխանում է օրենքին, թե՛ ոչ և նման պայմաններում կարող էր հարուցվել կարգապահական վարույթ, թե՛ ոչ:

Նախապատրաստողն իր եզրակացության մեջ նշել է, որ ուսումնասիրելով վարույթում առկա բոլոր փաստաթղթերը, իրեղեն ապացույցը՝ գտնում է, որ Պատասխանողի գործողություններում առկա չէ վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի, ինչպես նաև 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ, քանի որ առանց համապատասխան մասնագետի կարծիքի հնարավոր չէ պարզել, թե արդյոք նշված արտահայտություններն արվել են Պատասխանողի կողմից, թե ոչ:

Նախապատրաստողը նշել է, որ չի կարող ասել, թե իրականում ով է հնչեցրել նշված արտահայտությունները և ում են դրանք ուղղված եղել և արձանագրել է, որ Պատասխանողը դրա վերաբերյալ դիրքորոշում չի հայտնել:

Շարունակելով իր վերլուծությունները՝ Նախապատրաստողը նշել է, որ նման արտահայտությունները կարող էին Փաստաբանի վարքագծի կանոնների խախտում դիտվել այն պարագայում /եթե իրականում դրանք հնչեցվել են փաստաբանի կողմից/, երբ նիստը նախագահող դատավոր Ռ.Պապոյանը փաստաբանի վարքագծում իրականում նկատել է իրավաչափ գործողություններ, ընդհուպ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք և **համապատասխան միջոցներ կիրառել...հիմք ստեղծել**:

Նախապատրաստողը եզրակացրել է, որ դատավոր Ռ.Պապոյանը, Պատասխանողի նկատմամբ սանկցիա չկիրառելով խախտել է օրենքով սահմանված կարգը, ինչի հետևանքով կարգապահական վարույթ Պատասխանողի նկատմամբ չպետք է հարուցվեր:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն

դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս»:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործում առկա մյուս նյութերը, նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- 1) Թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով մեղադրյալ է հանդիսացել Արմեն Ռաֆայելի Միքայելյանը, ում պաշտպանությունն իրականացրել է փաստաբան Երվանդ Վարոսյանը,
- 2) Թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով 17.03.2017թ. կայացած դատական նիստին մասնակցել է փաստաբան Երվանդ Վարոսյանը, որպես ամբաստանյալ Արմեն Ռաֆայելի Միքայելյանի պաշտպան,
- 3) Թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով դատավճռի եզրափակիչ մասի հրապարակման ժամանակ փաստաբան Երվանդ Վարոսյանի կողմից հնչեցվել են **«էդ զենքը դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեքը, եթե դա ապօրինի ա: էդ դնողը տականք ա, տականք»** արտահայտությունները:
- 4) Թիվ ԿԳ-17025 կարգապահական գործը հարուցվել է Պալատի նախագահի 04.05.2017թ.թիվ 125-Ա/ԿԳ-17025 որոշմամբ՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Պապոյանի և նույն դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի Պալատին ուղղված դիմումները:

Նշված փաստերը հաստատվում են կարգապահական գործի նյութերով, այդ թվում՝ դիմողների դիմումներով, Պատասխանողի բացատրություններով, դատական նիստի ձայնային արձանագրման կրիչով, Իվետա Մուրադյանի, Կարեն Ներսիսյանի ու Ռոբերտ Հունանյանի բացատրություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 22.08.2017թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/470-17 տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Վարոսյանը արտոնագիրը ստացել է 19.10.2007թ.: Երվանդ Վարոսյանի նկատմամբ 2006-2017թթ ժամանակահատվածում հարուցվել է 5 կարգապահական վարույթ¹, որից 2-ը գտնվում են քննության փուլում և 3-ը՝ ավարտվել են: Կայացվել են հետևյալ որոշումները՝

➤ Խորհրդի 17.05.2010թ. թիվ 12/1 որոշմամբ Երվանդ Վարոսյանի նկատմամբ դատական նիստերին չներկայանալու հիմքով, հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

➤ Խորհրդի 09.10.2015թ. թիվ ԿԳ/145-Ա որոշմամբ Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 2.2.3. և 5.2.1. ենթակետերի խախտման հատկանիշներով), որի արդյունքում կայացված որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ որպես հիմնական տույժ է կիրառվել խիստ նկատողությունը, իսկ որպես լրացուցիչ՝ լրացուցիչ վերապատրաստումը (8 ժամ):

¹ Սույն թվի մեջ չի հաշվարկվում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 04.05.2017թ.թիվ 125-Ա/ԿԳ-17025 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը:

➤ Խորհրդի 17.12.2015թ. թիվ ԿԳ/214-Ա որոշմամբ Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, (Կանոնագրքի 2.2.3. ենթակետի խախտման հատկանիշներով), որի արդյունքում կայացված որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ որպես հիմնական տույժ է կիրառվել խիստ նկատողությունը, խորհրդի որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

➤ Խորհրդի 01.08.2017թ. թիվ 220-Ա/ԿԳ-17062 որոշմամբ Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ (Կանոնագրքի 4.1. կետի խախտման հատկանիշներով), որը գտնվում է նախապատրաստման փուլում:

➤ Խորհրդի 10.08.2017թ. թիվ 220-Ա/ԿԳ-17069 որոշմամբ Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1. կետի խախտման հատկանիշներով), որը գտնվում է նախապատրաստման փուլում:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար, իսկ 2.2.2. և 2.2.3. ենթակետերի պահանջների խախտման մասով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1. կետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, **պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:**

Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: **Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 15-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ *Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է Նախապատրաստողը: Պալատի խորհուրդը կաշկանդված չէ Նախապատրաստողի դիրքորոշումով և կարող է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը փոփոխել:*

Նախապատրաստողը գործը վերլուծել է Օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի իրավական հիմքով, հաշվի չի առել որ փաստաբանի նկատմամբ սույն կարգապահական գործը հարուցվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1

հողվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի իրավական հիմքով ինչի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման: Նախապատրաստողը հարկ չի համարել անդրադառնալ ուշադրության արժանի այլ հանգամանքների՝ չի անդրադարձել Իվետա Մուրադյանի, Ռոբերտ Հունանյանի և Կարեն Ներսիսյանի բացատրություններին, եզրահանգում չկատարելով դրանց ապացուցողական նշանակության վերաբերյալ, ինչի մասին ուղղակիորեն նշել է իր եզրակացության մեջ՝ «*Չեմ անդրադառնում վկաների ցուցմունքներին քանզի նշեցի որ ընթացակարգը չի պահպանվել*»:

Վերոնշյալ նորմերի, Պատասխանողի և Նախապատրաստողի դիրքորոշումների վերլուծությունից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի վերոնշյալ կետով և ենթակետերով սահմանված խախտման առկայության կամ բացակայության փաստն արձանագրելու համար անհրաժեշտ է պարզել՝

➤ արդյո՞ք Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է վարույթ հարուցելու հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի պահանջների պահպանմամբ, թե՛ ոչ,

➤ արդյո՞ք թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով 17.03.2017թ. դատավճռի եզրափակիչ հատվածի հրապարակման ժամանակ հնչեցված՝ **«Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեպը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը փականք ա, փականք»** արտահայտությունները հնչեցվել են Երվանդ Վարոսյանի կողմից, թե՛ ոչ:

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության 314¹ հոդվածի 7-րդ մասերի համաձայն՝ «*Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի ղեկավար իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար*»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3. հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*կարգապահական վարույթ հարուցելու առիթների և հիմքերի առկայության դեպքում փաստաբանների պալատի նախագահը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու մասին առիթը ծագելու պահից մեկ ամսվա ընթացքում*»:

Նույն օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝*

1) պեղական, տեղական ինքնակառավարման և ոչ պեղական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները), ինչպես նաև զանգվածային լրարվամիջոցների հրապարակումները.

2) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան {...}»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հարկանիշների առերևույթ առկայությունը*»:

Նույն Օրենքի 39⁴-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*կարգապահական վարույթ հարուցելու առիթի կամ հիմքի բացակայության դեպքում փաստաբանների պալատի*

նախագահը պարճառաբանված որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու մերժելու մասին»:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն Պալատի նախագահի որոշմամբ: Միևնույն ժամանակ սակայն, հնարավոր է նման որոշման ընդունման երկու ձևաչափ՝

1. կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու հարցում Պալատի նախագահն ունի հայեցողական լիազորություն, որի իրագործման արդյունքում կարգապահական վարույթը կարող է ինչպես հարուցվել, այնպես էլ՝ չհարուցվել,

և

2. կարգապահական վարույթ հարուցելու հարցում Պալատի նախագահը չունի հայեցողական լիազորություն և պարտավոր է հարուցել կարգապահական վարույթ:

Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության 314¹ հոդվածի 7-րդ մասերից բխում է, որ այն դեպքում, երբ որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսանում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ **Պալատի նախագահը չունի կարգապահական վարույթ հարուցելու հարցում հայեցողական լիազորություն և պարտավոր է վարույթ հարուցել:**

Մինչդեռ, այն դեպքում, երբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսանում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝ Պալատի նախագահն իրագործում է կարգապահական վարույթ հարուցելու կամ կարգապահական վարույթ հարուցումը մերժելու իր հայեցողական լիազորությունը:

Այլ կերպ ասած, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ընթացակարգերը տարբերվում են ոչ թե այն սուբյեկտների կազմով, ովքեր կարող են կարգապահական վարույթ հարուցելու առիթ առաջացնել, այլ այդ առիթի առաջացման դեպքում Պալատի նախագահի մոտ կարգապահական վարույթ չհարուցելու հնարավորության առկայությամբ կամ բացակայությամբ:

Ինչպես նշվեց սույն որոշման 2-րդ կետում՝ Հարուցման որոշման մեջ հստակ նշվել է, որ Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթն է հանդիսացել ոչ թե դատարանի սանկցիան, այլ դատավոր Ռ.Լ. Պապոյանի և դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի դիմումները:

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը հաստատված համարելով, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Լ. Պապոյանը չի օգտվել ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության 314¹ հոդվածի 7-րդ մասերով սահմանված իր լիազորությունից, այն է՝ 17.03.2017թ. դատական նիստում առանձին որոշում չի կայացվել ՀՀ փաստաբանների պալատ դիմելու վերաբերյալ, միևնույն ժամանակ զրկված չի եղել Պալատ դիմելու՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասով ընձեռված իրավունքից, որից և օգտվել է, իսկ Պալատի նախագահն իր հայեցողական լիազորությունն իրագործելով որոշում է կայացրել հարուցել կարգապահական վարույթ:

Հատուկ ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթի առիթ է հանդիսացել, ոչ միայն դատավոր Ռ. Լ. Պապոյանի, այլ նաև Դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի դիմումը:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն պնդմանը, որ Խորհրդի կողմից նախկինում կարճվել են բազմաթիվ կարգապահական վարույթներ այն պատճառաբանությամբ, թե դատավորները փաստաբանների պալատ դիմելու մասին որոշումները համապատասխան կարգի խախտմամբ են կայացրել կամ կազմել, ապա Խորհուրդը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Պատասխանողն այս մասով իրավացի է և նմանատիպ որոշումներ նախկինում իրոք կայացվել են, մասնավորապես թիվ 12-018 ԿԳ, թիվ ԿԳ-15169, ԿԳ13-022 և թիվ 17-Ա/12-007ԿԳ կարգապահական գործերով, որոնցից երկուսին Պատասխանողը մասնակցել է որպես Խորհրդի անդամ, որոնք սակայն կիրառելի չեն սույն կարգապահական գործի նկատմամբ:

Վերոնշյալ բոլոր չորս գործերով կարգապահական վարույթը հարուցվել են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված առիթով՝ «փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ {...} պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան»:

Նշված գործերով սակայն, քննության ընթացքում պարզվել է, որ կարգապահական վարույթի հարուցման հիմքն ի սկզբանե առկա չի եղել, քանի որ դատարանների կողմից չի պահպանվել ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ և ՀՀ քրեական դատավարության 3141 հոդվածի 7-րդ մասերով նախատեսված լիազորության իրագործման օրենքով նախատեսված ընթացակարգը՝ նույն դատական նիստում չի կայացվել փաստաբանի նկատմամբ սանկցիա կիրառելու առանձին որոշում:

Այսինքն, Խորհրդի կողմից նախկինում կարճվել են այն կարգապահական վարույթները, որոնց ընթացքում պարզվել է, որ առկա չէ դրանց հարուցման առիթը, մինչդեռ սույն կարգապահական գործի հարուցման առիթ ի սկզբանե հանդիսացել է ոչ թե Դատարանի սանկցիան, այլ՝ Առաջին և Երկրորդ դիմողների դիմումները, որոնք իրենցից ներկայացնում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված առիթից տարբերվող, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված այլ առիթ, ուստիև այդ առիթով հարուցված կարգապահական վարույթների նկատմամբ վերոնշյալ գործերը կիրառելի չեն:

Միևնույն ժամանակ Խորհուրդը հարկ է համարում նշել, որ թիվ ԿԳ-16066 կարգապահական գործով Պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելիս, նույնպես հիմք է ընդունվել դատավորի **դիմումը**:

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Խորհուրդն իր որոշումներում հետևողականորեն դրսևորում է տարբերակված մոտեցում այն դեպքերի նկատմամբ, երբ կարգապահական վարույթը հարուցվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված առիթով և այն դեպքերի նկատմամբ, երբ կարգապահական վարույթը հարուցվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված առիթով:

Ինչ վերաբերում է **«Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեպը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը տականք ա, տականք»** արտահայտությունները Պատասխանողի կողմից հնչեցնելու հանգամանքին, ապա Խորհուրդը անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

Կարգի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«ապացույցներ են կողմի բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը,*

իրեղեն ապացույցները (այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև ծայնագրություններն ու տեսագրությունները»:

Տվյալ դեպքում խնդրո առարկա արտահայտությունները հնչեցվելու փաստը հիմնավորվում է թիվ ԵՄԴ/0101/01/16 քրեական գործով 17.03.2017թ. նիստի ծայնային արձանագրության կրիչով:

Նշված արտահայտությունները Երվանդ Վարոսյանի կողմից հնչեցվելու հանգամանքը հիմնավորվում է՝

1. Առաջին և Երկրորդ դիմողների դիմումներով,

2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատական կարգադրիչներ Կարեն Ներսիսյանի ու Ռոբերտ Հունանյանի բացատրագրերով,

3. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նիստերի քարտուղար Իվետա Մուրադյանի բացատրագրով (անուղղակի ապացույց):

Հաշվի առնելով, որ վերոնշյալ կետերում նշված ապացույցների բովանդակությունն արդեն իսկ բացահայտվել է վերը, Խորհուրդը դրանց այլևս չի անդրադառնում:

Խորհուրդն արձանագրում է, որ 01.06.2017թ.-ին Պատասխանողի կողմից ներկայացվել է վերջինիս դիրքորոշումը կարգապահական վարույթի վերաբերյալ, որում Պատասխանողը չի հերքել նշված արտահայտությունն իր կողմից կատարված լինելու հանգամանքը: Փոխարենը, Պատասխանողը դատողություններ է կատարել արտահայտության դատավոր Պապոյանին ուղղված լինելու, չլինելու վերաբերյալ, այդ արտահայտության ոչ միանշակ վիրավորական լինելու և այլ հանգամանքներին, որոնք մանրամասնորեն նշված են սույն որոշման 3-րդ կետի 3.2. ենթակետում:

Պատասխանողի կողմից մինչև Նախապատրաստողի կողմից եզրակացություն տալը չի ներկայացվել որևէ միջնորդություն վկա հրավիրելու վերաբերյալ, մինչդեռ, ինչպես ակնհայտ է դառնում 17.03.2017թ. նիստի ծայնային արձանագրության կրիչից, խնդրո առարկա արտահայտությունը հնչեցնելու ընթացքում նիստերի դահլիճում գտնվել են այլ մարդիկ, ովքեր կարող էին իրենց ցուցմունքով հավաստել, որ արտահայտությունը չի կատարվել Պատասխանողի կողմից:

Պատասխանողի կողմից չի ներկայացվել արտահայտություններն իր կողմից անելու հանգամանքը հերքող որևէ ապացույց նաև Նախապատրաստողի կողմից եզրակացություն տալուց հետո, ինչի հնարավորությունը Պատասխանողին տրված էր Կարգի 15-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով:

Վերոգրյալի հաշվառմամբ և համադրելով վերոնշյալ փաստերը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Երվանդ Վարոսյանն ամբողջ կարգապահական վարույթի ընթացքում խուսափել է դիրքորոշում հայտնել խնդրո առարկա արտահայտություններն իր կողմից արված լինելու կամ չլինելու վերաբերյալ, ինչի պարագայում Խորհուրդը հաշվի առնելով վերը նշված ապացույցները **«Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հերը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը տականք ա, տականք»** արտահայտությունները Երվանդ Վարոսյանի կողմից հնչեցված լինելու փաստը համարում է ապացուցված:

Ինչ վերաբերում է Պատասխանողի և Նախապատրաստողի այն փաստարկին, որ չի կարելի միանշանակ ասել, որ դրանք ուղղված են եղել Առաջին դիմողին, ապա Խորհուրդը հարկ է համարում ընգծել, որ նշված հանգամանքն ինքնին որևէ էական նշանակություն չունի այդ արտահայտությունները Կանոնագրքի 4.1. կետի լույսի ներքո գնահատելու համատեքստում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դյուլդինը և Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (DYULDIN AND KISLOV V. RUSSIA) գործով, անդրադառնալով գրպարտության հասցեականության հարցին նշել է՝ «կոնկրետ գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի մի հանգամանք, որը կստիպի շարքային ընթերցողին զգալ, որ հրապարակման մեջ պարունակվող վիճարկվող պնդումներն ուղղակիորեն ստվեր են գցում անձամբ հայցվորի վրա կամ որ այդ հայցվորը հանդիսացել է քննադատության օբյեկտ»:

Խորհուրդը գտնում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ գործով արտահայտած դիրքորոշման տրամաբանությունն ամբողջովին կիրառելի է սույն կարգապահական վարույթի նկատմամբ:

Այսպես, դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը կարող է դրսևորվել ոչ միայն վերջինիս ուղղակի անվանական վիրավորելով, այլ նաև այնպիսի արտահայտություններ հնչեցնելով, երբ ցանկացած «շարքային» անձի համար ակնհայտ է, որ դրանք ուղղված են դատավորին, ինչն առկա է սույն դեպքում:

Տվյալ դեպքում, Պատասխանողի կողմից հնչեցված վերը նշված արտահայտությունից ակնհայտ է, որ այն՝ «ապօրինի դատողի» մասով ուղղված է եղել Դատարանի դատավոր Ռ.Լ. Պապոյանին, քանի որ արտահայտությունը հնչեցնելու պահին Ռ.Լ. Պապոյանը հանդիսացել է միակ դատավորն, ով մեղադրական դատավճիռ է կայացրել (դատել է) Պատասխանողի պաշտպանյալ Արմեն Միքայելյանի նկատմամբ:

Բացի այդ, անգամ եթե մի պահ ընդունենք, որ խնդրո առարկա արտահայտությունն անմիջականորեն ուղղված չի եղել Դատարանի դատավոր Ռ.Լ. Պապոյանին, ապա նմանատիպ արտահայտություններ դատական նիստերի դահլիճում բղավելով հնչեցնելն ինքնին վկայում է նիստը նախագահող դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին, ինչպես նաև դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին չենթարկվելու մասին:

Ինչ վերաբերում է Պատասխանողի խնդրո առարկա արտահայտությունները բովանդակային գնահատելու հարցին, ապա Խորհուրդը հարկ է համարում նշել, որ խնդրո առարկա արտահայտությունը հարկ է գնահատել ողջամիտ մարդու չափանիշի տեսանկյունից²: Ակնհայտ է, որ «**Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեղը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը փականք ա, փականք**» արտահայտության «**Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեղը**» հատվածը, հաշվի առնելով այդ արտահայտությունների բովանդակությունը և արտասանման տոնայնությունը ունեցել է կոնկրետ ենթատեքստ, որի բովանդակությունն ակնհայտ է Հայաստանյան իրականության մեջ ապրող ցանկացած ողջամիտ մարդու, այդ թվում Խորհրդի համար և ըստ երևույթի ակնհայտ է եղել նաև Առաջին և Երկրորդ դիմողների համար՝ հաշվի առնելով նրանց կողմից այդ արտահայտությունների հիմքով Պալատ դիմում ներկայացնելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը Խորհուրդը եզրահանգում է, որ Պատասխանողը, «**Էդ զենք դնողի մերը, ապօրինի դատողի էլ հեղը, եթե դա ապօրինի ա: Էդ դնողը փականք ա, փականք**» արտահայտությունը նիստերի դահլիճում բղավելով հնչեցնելով, խախտել է Կանոնագրքի 4.1. կետի պահանջները՝ **չի ենթարկվել այդ դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել դատավորի նկատմամբ:**

²http://www.law.nyu.edu/sites/default/files/upload_documents/The%20Many%20Faces%20of%20the%20Reasonable%20Person.pdf

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբան Երվանդ Վարսյանի անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների...:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը՝ միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Դիտարկելով Պատասխանողի գործողությունները Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3. ենթակետերի լույսի ներքո՝ Խորհուրդը գտնում է, որ այդ ենթակետերի պահանջների ենթադրյալ խախտման մասով հարուցված վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.2. կետի համաձայն՝ *Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):*

Կանոնագրքի 2.2.3. կետի համաձայն՝ *Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:*

Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3. ենթակետերը ներառված են Կանոնագրքի «Վստահություն և հարգանք իր մասնագիտության նկատմամբ» վերտառությամբ 2.2. կետում, որն իր հերթին ներառված է Կանոնագրքի «Ընդհանուր սկզբունքներ» վերտառությամբ 2-րդ գլխում:

Ինչպես և ցանկացած իրավական ակտի դեպքում, Կանոնագրքի սկզբունքները նույնպես ամրագրվելով Կանոնագրքում, այնուհետև արտացոլվում են դրա առանձին («հատուկ») նորմերում, որոնցից մեկն է Կանոնագրքի 4.1. կետը: Փաստաբանի մասնագիտական գործունեությունը կարգավորող և Կանոնագրքով սահմանված «հատուկ» նորմերի պահանջների խախտումը որպես կանոն անխուսափելիորեն հանգեցնում է նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ դնելուն և (կամ) անհարգանքի, անվստահության ձևավորման փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում հատուկ նշել, որ վերոնշյալը չի բացառում, որ փաստաբանը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել ուղղակիորեն Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3. կետերի պահանջների խախտման համար, սակայն սույն դեպքում, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված վարույթը ենթակա է կարճման, քանի որ Կանոնագրքի 4.1. կետի խախտումն իր մեջ կլանում է Կանոնագրքի 2.2.2. և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտումը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Պալատի Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2. և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17025 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Երվանդ Վարոսյանին (արտոնագիր թիվ 776) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող

Սեդրակ Ասատրյան